Արձանագրություն N 3
«ՀԳԴ-ԷԱՃԱՇՁԲ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «07» «դեկտեմբերի» 2018թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մեժլումյանը
Կ. Համբարձումյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գաբրիելյանը

1. ՀԳԴ-ԷԱՃԱՇՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գնահատման մասին
(Հ. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- 03.12.2018թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ Ա/Ձ Դավիթ Քոչարյանի և Ա/Ձ Վարդան Մկրտչյանի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում՝ եթե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման մասին եզրակացությունը սահմանված ժամկետներում տրամադրվել է:
- Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն չի արձանագրվել (հայտնաբերվել):
- Հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը Մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ գնահատվել են բավարար:

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին
(Հ. Մարտիրոսյան)

Հանձնաժողովը որոշեց.

- Ընտրված մասնակից ճանաչել 1-ին, 4-րդ և 10-րդ չափաբաժիններով՝ Ա/Ձ Դավիթ Քոչարյանին և 2-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժիններով՝ Ա/Ձ Վարդան Մկրտչյանին.

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը.
- ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Մարտիրոսյան

Անդամներ՝ _____ Մ. Մեժլումյան

_____ Կ. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա.Գաբրիելյան